

Ապրիլի 30, 2021թ.

Կարծիք

«Վարչական իրավախախտումների մասին»

ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի շուրջ

Պաշտոնական e-draft.am հարթակում քննարկման է դրվել ՀՀ Գլխավոր դատախազության մշակած «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի [նախագիծ](#), որով նախատեսվում է վարչական պատասխանատվություն սահմանել հասարակական վայրերում, ԶԼՄ-ներում և առցանց տիրույթում (այդ թվում՝ սոցիալական ցանցերում) խոսքի, պատկերի, նշանի կամ այլ միջոցով հրապարակային հայեցողության կամ ցանկացած ձևով անպարկեշտ վիրավորանքի համար: Վարչական պատասխանատվության չափը սահմանված է 100,000-150,000 դրամ, իսկ մեկ տարվա ընթացքում կրկնվելու դեպքում՝ 150,000-300,000 դրամ:

Հեղինակները նախագծի նպատակը հիմնավորել են նրանով, որ ԶԼՄ-ներում և սոցիալական ցանցերում տարածվում է հայեցողություն, որն իր բնույթով հրապարակային է, և դրանով խաթարվում են սոցիալական բնական հարաբերությունը, հասարակական համերաշխությունն ու կարգը, ուստի առաջանում է պետության կողմից կարգավորելու խնդիր:

Այսպիսով, նախագծի հեղինակների կարծիքով, հրապարակային արտահայտության զուտ հայեցողություն, անպարկեշտ բնույթի լինելու հանգամանքը ինքնին բավարար է տվյալ խոսքն արգելելու համար: Մինչդեռ, արտահայտվելու ազատությանը վերաբերող ժամանակակից սկզբունքների համաձայն՝ խոսքի վուլգար բնույթը բավարար չէ այն անօրինական համարելու համար, քանի որ *«ոճր հաղորդակցման՝ որպես արտահայտության ձևի բաղկացուցիչ մաս է, և որպես այդպիսին պաշտպանված է արտահայտության բովանդակության հետ միասին»*¹:

¹ [MAGYAR TARTALOMSZOLGÁLTATÓK EGYESÜLETE AND INDEX.HU ZRT-ն](#) ընդդեմ Հունգարիայի, 22947/13, 02/02/2016, կետ 76: Տե՛ս նաև ՏՎԽ-ի թիվ 50 որոշումը, որում անդրադարձ կա սույն որոշմանը:

Դա նշանակում է, որ որոշ դեպքերում կարևոր տեղեկությունը, հանրային նշանակության բովանդակությունը կարող է գուցորդվել հայհոյանքով կամ վուլգար խոսքով, ուստի այդ նպատակով հարկ է, որ նման խոսքը կարողանա գոյություն ունենալ: Վիրավորանքը միայն այն դեպքում կարող է դուրս մնալ ազատ խոսքի պաշտպանությունից, երբ *«վիրավորական արտահայտության միակ նպատակը վիրավորելն է»*:²

Մինչդեռ, միշտ չէ, որ վուլգար խոսքը, հայհոյանքը կատարվում է չարամիտ դիտավորությամբ, և որքան էլ որ դրանք իրենց բովանդակությամբ տհաճ են, լինում են դեպքեր, երբ դրանց հրապարակային տարածմամբ *«խաթարվում են սոցիալական բնական հարաբերությունը, հասարակական համերաշխությունը»*,³ ինչպես նշված է նախագծի հիմնավորման մեջ:

Խնդիրը իրավամբ կարիք ունի օրենսդրական կարգավորման, քանի որ դրա համար առկա է հասարակական անհրաժեշտություն: Այդուհանդերձ, **Խորհուրդը** վիճահարույց է համարում այն, որ օրինագծում փորձ է արվում որպես զանցանքի օբյեկտիվ հատկանիշ սահմանել ոչ թե զանցառուի չարամիտ դիտավորությունը, այլ հրապարակային արտահայտության «հայհոյանք» կամ «անպարկեշտ» բնույթի լինելը: Սա, ըստ Խորհրդի, խոսքի ազատության սահմանափակման ոչ թե բովանդակային, այլ մեխանիկական մոտեցում է:³ Նույնիսկ հրապարակային վուլգար արտահայտությունը, որը չունի վնասելու չարամիտ դիտավորություն, կարող է պարունակել հասարակական նշանակության խոսք, և պետք է թույլ տալ, որ այն գոյություն ունենա՝ հանրային շահի գերակայության լույսի ներքո: Մինչդեռ, առաջարկվող օրենսդրական արգելքները հնարավորություն չեն տալիս դա անել: Հետևաբար, նպատակահարմար է, որ օրինագծի հեղինակները զանցավոր արարքի հիմքում տեսնեն ոչ թե խոսքի անպարկեշտ բնույթը, այլ վիրավորելու, արատավորելու, հասարակական կարգը խախտելու չարամիտ դիտավորությունը:

Տեղեկատվական վեճերի խորհուրդ

Շուշան Դոյդոյան (Խորհրդի քարտուղար) - Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ

Արա Ղազարյան - «Արա Ղազարյան» իրավաբանական գրասենյակի տնօրեն

Բորիս Նավասարդյան - Երևանի մամուլի ակումբի նախագահ

Արամ Աբրահամյան - «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր

² Նույն տեղում:

³ Տե՛ս, այս իմաստով Սահմանադրական դատարանի դիրքորոշումը ՄԴՈ-997 որոշման մեջ, ըստ որի՝ և՛ վիրավորանքի, և՛ զրպարտության համար միջազգային իրավական պրակտիկայում որպես հիմնական հատկանիշ է դիտարկվում արարքի դիտավորությունը:

Աշոտ Մելիքյան - Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի
նախագահ
Օլգա Սաֆարյան - Փաստաբան
Դավիթ Սանդուխյան - Փաստաբան